



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
ՊԱՏԳԱՄԱՎՈՐ**

31 մայիսի 2024

**Հայաստանի Հանրապետության
Ազգային ժողովի նախագահ
ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

Հարգելի՛ պարոն Սիմոնյան,

Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 109-րդ եւ «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 65-րդ եւ 67-րդ հոդվածների՝ օրենսդրական նախաձեռնության կարգով Ձեզ եմ ներկայացնում <<Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը:

Ազգային ժողովի աշխատակարգի 25-րդ կետի համաձայն՝ գրությանը կցվում են՝

ա) նախագիծը (հիմնական զեկուցող՝ Սիսակ Գաբրիելյան),

բ) նախագծի ընդունման հիմնավորումը:

Խնդրում եմ օրենքի նախագիծը սահմանված կարգով դնել շրջանառության մեջ:

Հարգանքով՝

Սիսակ Գաբրիելյան (031)

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտերի ընդունման անհրաժեշտությունը.

Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունում (ՀԽՍՀ) գործող և Հայաստանի Հանրապետության անկախացումով պայմանավորված գրանցված և նույնաբնույթ գործունեությունը շարունակած կազմակերպությունները ՀԽՍՀ օրոք իրենց օգտագործմանը կամ տիրապետմանը հանձնված հողամասերի և դրանց վրա գտնվող շենքերի ու շինությունների նկատմամբ (հանձնումը կապված է եղել վերջիններիս գործունեության բնույթի՝ որոշակի հանրօգուտ նպատակների առկայության հետ) սեփականության իրավունք են գրանցել ՀՀ անկախացումից հետո: Մասնավորապես, ՀՀ անկախացումից հետո ՀԽՍՀ շրջանում գործունեություն իրականացրած նախկին կազմակերպությունները ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի կամ այլ հիմքով կամ պայմաններով գրանցել են իրենց սեփականության իրավունքը նախկինում անհատույց հիմունքներով ձեռքբերված հողամասի, ինչպես նաև դրանց վրա կառուցված անշարժ գույքերի նկատմամբ: Ընդ որում, գույքերի՝ որոշակի հանրօգուտ (պատմական, մշակութային, գեղարվեստական և այլն) նշանակություն ունենալն է պայմանավորել ի սկզբանե ՀԽՍՀ շրջանում կոնկրետ սուբյեկտների կողմից այդ գույքերի ձեռքբերումը: Այդպիսի օրինակներ են տարբեր մասնագիտական միավորումների, արհմիությունների, այլ ոչ առևտրային կազմակերպությունների կողմից նման գույքերի ձեռքբերումը:

Այսպիսով, հանրօգուտ նպատակների համար ստեղծված և համապատասխան նշանակություն ունեցող գույքերի որոշ շրջանակի նկատմամբ անհատույց հիմունքներով գրանցվել է ոչ առևտրային կազմակերպությունների սեփականության իրավունքը՝ որպես այդ կազմակերպությունների գործունեությանը խթանող գործիք, սակայն չեն սահմանվել պետության և հասարակության համար նման կարևոր արժեք ներկայացնող գույքերի նկատմամբ սեփականության կամ այլ գույքային իրավունքների փոխանցմանը հանգեցնող գործարքների կնքման վերաբերյալ հատուկ ընթացակարգեր կամ կարգավորումներ: Միայն գործող ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 9-րդ մասն է սահմանում կանոն առ այն, որ. «Սույն հոդվածի 8-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված հողամասերը սեփականության իրավունքով անհատույց ձեռք բերելուց հետո հողամասի առուվաճառքի, նվիրատվության, փոխանակման, իրավաբանական անձի բաժնետոմսի (բաժնեմասի, փայի) դիմաց բաժնետոմսի (բաժնեմասի, փայի) սեփականատիրոջը հանձնման կամ իրավաբանական անձանց լուծարումից հետո նրա հիմնադիրներին (մասնակիցներին) հանձնման, այդ թվում՝ պարտատերերի պահանջների բավարարման կամ բռնագանձման հետևանքով հողամասի սեփականատիրոջ փոփոխության դեպքում անկախ այն հանգամանքից, թե հողամասը ձեռք է բերվում հատուցմամբ կամ անհատույց, ձեռք բերողը համապատասխան

համայնքային բյուջե պետք է վճարի հողամասի՝ վճարման պահին գործող կադաստրային արժեքը»:

Այնուամենայնիվ, գույքերի նկատմամբ սեփականության կամ այլ գույքային իրավունքների փոխանցմանը հանգեցնող գործարքների կնքման վերաբերյալ հատուկ ընթացակարգերի կամ կարգավորումների բացակայության պայմաններում հնարավոր չէ լիարժեք ապահովել հասարակության կամ պետության համար կարևոր արժեք ներկայացնող գույքերի պահպանությունը, որպիսի իրավիճակը ռիսկային է այնքանով, որքանով պետության և հասարակության համար որոշակի արժեք ներկայացնող, նախկինում հենց այդ արժեքի պահպանության, զարգացման նպատակով օգտագործված հողամասը և գույքը կարող են օտարվել կամ այլ գույքային իրավունքները կարող են փոխանցվել այնպես, որ պետության կողմից ի սկզբանե նախանշված և հանրօգուտ նպատակներով ձեռքբերված գույքերն առանց որևէ ընթացակարգային սահմանափակման օտարվեն ցանկացած սուբյեկտի՝ հանգեցնելով այդ գույքերի ոչնչացման, աղավաղման կամ այլ ոչ հանրօգուտ և սկզբնական նշանակությունից տարբերվող նպատակներով օգտագործման:

Ընդ որում, այն, որ որոշակի խումբ գույքեր ի սկզբանե ձեռք են բերվել կոնկրետ նպատակներով և պետությունը փորձել է սահմանել որոշակի պայմաններ նմանատիպ գույքերի հետագա օտարման համար, հիմնավորվում է ՀՀ հողային օրենսգրքի վկայակոչված հոդվածով, որի վերլուծությունը թույլ է տալիս փաստել, որ օրենսդիրն արդեն իսկ անհատույց հիմունքներով իրավաբանական անձանց փոխանցված որոշ գույքերի օտարման լրացուցիչ պայմաններ է սահմանել՝ դրանով փորձելով նվազեցնել նմանատիպ գույքերի օտարման գործընթացը: Այսպիսով, օրենսդիրը, սահմանելով որոշակի հողամասերի նկատմամբ անհատույց սեփականության իրավունքի առաջացման հիմք, միաժամանակ որպես հակակշիռ սահմանել է հետագայում գույքի՝ ցանկացած եղանակով սեփականության իրավունքի փոփոխման դեպքում գույքի կադաստրային արժեքը վճարելու պահանջ: Այնուամենայնիվ, սահմանված զսպող մեխանիզմները բավարար չեն հիմնական նպատակի, այն է՝ պետության և հասարակության համար արժեք ներկայացնող գույքերի՝ այլ նպատակներով օգտագործման դեպքերը կանխելու կամ հնարավորինս նվազեցնելու համար:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը.

Վերոնշյալ հիմնավորումները հաշվի առնելով և պայմանավորված որոշակի խումբ գույքերի պահպանությունն ապահովելու անհրաժեշտությամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) առաջարկվում է հետևյալը.

2.1. Առաջարկվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքը (այսուհետ՝ Օրենսգրք) լրացնել նոր 17.1 գլխով, որը նվիրված կլինի որոշակի չափանիշներին համապատասխանող և Կառավարության կողմից սահմանված ցանկում ներառված գույքերի նկատմամբ սեփականության և այլ գույքային իրավունքների փոխանցման առանձնահատկություններին:

Այսպես, առաջարկվել է նախատեսել այն չափանիշները, որոնց բավարարող գույքը կարող է ներառվել Կառավարության կողմից սահմանվող ցանկում և ենթարկվել իրավունքների փոխանցման առանձնահատկությունների վերաբերյալ կարգավորումներին: Այդպիսին է համարվում այն անշարժ գույքը, որի նկատմամբ գույքային իրավունքները պատկանել են ՀԽՍՀ հասարակական կազմակերպությանը և որի նկատմամբ գրանցվել է ՀՀ-ում ստեղծված ոչ առևտրային կազմակերպության սեփականության իրավունքը:

Նման կարգավորման միջոցով փորձ է կատարվել սահմանել հիմնական չափանիշներ, ապահովել, որ օրենքի դրույթները տարածվեն միայն ՀՀ-ում ստեղծված ոչ առևտրային կազմակերպություններին սեփականության իրավունքով անհատույց փոխանցված այն անշարժ գույքերի վրա, որոնց նկատմամբ գույքային իրավունքները պատկանել են ՀԽՍՀ հասարակական կազմակերպություններին:

2.2. Առաջարկվել է սահմանել ընդհանուր և հատուկ կանոններ՝ տարանջատելով անշարժ գույքի նկատմամբ սեփականության և այլ գույքային իրավունքների հատուցելի կամ անհատույց փոխանցման, ինչպես նաև գրավադրման դեպքերը:

2.2.1. Որպես ընդհանուր կանոն անշարժ գույքի հատուցելի կամ անհատույց հիմունքներով սեփականատիրոջ փոփոխությանը հանգեցնող գործարքների կնքման համար նախատեսվել է պայման, այն է՝ տվյալ իրավաբանական անձի կառավարման բարձրագույն մարմնի անդամների 2/3-ի համաձայնության առկայությունը: Ընդ որում, նշված կանոնը պետք է կիրառելի լինի բոլոր տեսակի ոչ առևտրային կազմակերպությունների նկատմամբ՝ անկախ առանձին կարգավորումներում հատուկ դրույթի առկայությունից: Միաժամանակ, նշված դրույթը պետք է տարածվի բոլոր տեսակի ոչ առևտրային կազմակերպությունների նկատմամբ, այդ թվում, բայց չսահմանափակվելով՝ հասարակական կազմակերպությունների, հիմնադրամների, կրոնական կազմակերպությունների, ոչ առևտրային կոոպերատիվների, ինքնակարգավորվող կազմակերպությունների, արհեստակցական միությունների և այլն:

Որպես գույքի հատուցելի կամ անհատույց հիմունքներով սեփականատիրոջ փոփոխությանը հանգեցնող գործարքների կնքման կարգ՝ նախատեսվել է գործարքի կնքումից առնվազն երեք ամիս առաջ գործարքին համաձայնություն տալու մասին ակտի նախագիծը, այսինքն՝ իրավաբանական անձի կառավարման բարձրագույն մարմնի անդամների կողմից ընդունվելիք ակտի նախագիծը հանրային քննարկման դնելու պահանջ: Հանրային քննարկումը նախատեսվել է իրականացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից վարվող իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում ակտի նախագիծը հրապարակելու միջոցով՝ պետական գույքի կառավարման ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարության միջոցով:

2.2.2. Որպես հատուկ կարգավորում՝ գույքի հատուցելի օտարման դեպքում նախատեսվել է պետության գնման նախապատվության իրավունքը: Նման կարգավորման միջոցով մի կողմից երաշխավորվել է անշարժ գույքի սեփականատիրոջ՝ գույքն օտարելու իրավունքի իրականացումը, իսկ մյուս կողմից պետության

հնարավորությունը՝ ձեռք բերելու պետության կամ հասարակության համար որոշակի արժեք ներկայացնող գույքը:

Որպես գնման նախապատվության իրավունքի ապահովման երաշխիք՝ առաջարկվել է սահմանել անշարժ գույքի սեփականատիրոջ պարտականությունը՝ գույքը ցանկացած երրորդ անձի հատուցմամբ օտարելու մտադրության մասին գրավոր տեղեկացնել Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս պետական գույքի կառավարման ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարության: Գրավոր ծանուցման մեջ նշվում են գույքի օտարման առաջարկվող գինը և գործարքի այլ էական պայմանները, իսկ ծանուցմանը կից ներկայացվում է «Գնահատման գործունեության մասին» օրենքով սահմանված առնվազն երեք գնահատման հաշվետվություն:

Միաժամանակ, սեփականատիրոջ համար հնարավոր անորոշության դեպքերը բացառելու նպատակով սահմանվել է պետության պարտականությունը՝ վեց ամսվա ընթացքում ձեռքբերման առաջարկն ընդունելու կամ մերժելու մասին սեփականատիրոջը գրավոր ծանուցելու վերաբերյալ: Սեփականատիրոջ՝ գույքի օտարման իրավունքի իրացումն ապահովելու նպատակով նախատեսվել է, որ եթե պետությունը հրաժարվում է ձեռք բերել գույքը, ապա սեփականատերն իրավունք ունի գույքը հատուցմամբ օտարել այլ անձի՝ պայմանով, որ փաստացի օտարման գինը պակաս չէ պետությանն առաջարկված գնից, իսկ պայմանագրի այլ պայմանները համապատասխանում են պետությանն առաջարկված պայմաններին:

Ընդ որում, այս դեպքում հնարավոր անբարեխիղճ վարքագիծը և պետությանը դիտավորությամբ պայմանագրի բարձր գին կամ այլ անբարենպաստ պայմաններ առաջարկելու հնարավորությունը սահմանափակելու համար առաջարկվել է սահմանել առավել ցածր գնով կամ բարենպաստ պայմաններով գույքն օտարելու մտադրության յուրաքանչյուր դեպքում պետությանը ծանուցելու և միայն հրաժարում ստանալուց հետո գույքն օտարելու կանոն: Նույն նպատակով նախատեսվել է նաև գնահատման հաշվետվություն ներկայացնելու պարտականություն:

2.2.3. Որպես հատուկ կարգավորում՝ առանձին խումբ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի անհատույց փոխանցման հնարավորությունը նախատեսվել է բացառապես ոչ առևտրային կազմակերպություններին, պետությանն ու համայնքներին նվիրաբերության կարգով փոխանցելու դեպքում: Նման կարգավորման նպատակն է կեղծ նվիրատվությունների և քողարկված այլ անհատույց հիմունքներով գույքի փոխանցման դեպքերի բացառումը:

2.3. Անշարժ գույքի նկատմամբ այլ գույքային իրավունքները հատուցմամբ կամ անհատույց փոխանցելու վերաբերյալ գործարքի կնքման համար նախատեսվել է պայման, այն է՝ տվյալ իրավաբանական անձի կառավարման բարձրագույն մարմնի անդամների 2/3-ի համաձայնության առկայությունը և գործարքի կնքումից առնվազն երեք ամիս առաջ գործարքին համաձայնություն տալու մասին ակտի նախագիծը, այսինքն՝ իրավաբանական անձի կառավարման բարձրագույն մարմնի անդամների կողմից ընդունվելիք ակտի նախագիծը հանրային քննարկման դնելու պահանջ: Հանրային քննարկումը նախատեսվել է իրականացնել Հայաստանի Հանրապետության

արդարադատության նախարարության կողմից վարվող իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում ակտի նախագիծը հրապարակելու միջոցով՝ պետական գույքի կառավարման ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարության միջոցով:

2.4. Նախագծով առաջարկվել է սահմանել գույքը միայն հոգուտ պետության կամ համայնքի գրավ դնելու սեփականատիրոջ իրավունքը, ինչպես նաև առանձին խումբ անշարժ գույքի գրավադրման գործարքը միայն տվյալ իրավաբանական անձի կառավարման բարձրագույն մարմնի անդամների 2/3-ի համաձայնության առկայության դեպքում կնքելու կանոն՝ գույքը գրավ դնելու և դրա հետևանքով սեփականության իրավունքից զրկվելու դեպքերը բացառելու նպատակով:

2.5. Նախագծով նաև առաջարկվել է սահմանել լրացվող գլխով նախատեսվող սեփականության և այլ գույքային իրավունքների փոխանցման պահանջների չպահպանման հետևանքը՝ այն կապելով գործարքի առոչնչության հետ:

Հարկ է փաստել, որ նմանաբնույթ պայմանների և ընթացակարգերի նախատեսումը համապատասխանում է համաչափության տարր կազմող պիտանիության, չափավորության և անհրաժեշտության չափանիշներին: Այսպես, նման միջոցները պիտանի են այնքանով, որքանով հնարավորություն են տալիս հասնել որոշակի արժեք ներկայացնող գույքերի պահպանման նպատակին, իսկ չափավոր և անհրաժեշտ՝ հաշվի առնելով, որ առկա է ողջամիտ հավասարակշռություն ձեռնարկվող միջամտության և հետապնդվող նպատակի միջև (ձեռնարկվող միջոցները չեն հանգեցնում սեփականատիրոջ՝ գույքն օգտագործելու, տիրապետելու կամ տնօրինելու սահմանափակումների, այլ միայն նախատեսում են որոշ ընթացակարգեր այդ գույքերի նշանակությամբ պայմանավորված, միաժամանակ երաշխավորելով կարևոր արժեք ներկայացնող գույքերի պահպանումը և հանրօգուտ նպատակներով օգտագործումը):

3. Ակնկալվող արդյունքը.

Նախագծի նպատակն է ապահովել պետության և հասարակության համար մշակութային, պատմական, գեղարվեստական, գեղագիտական կամ այլ արժեքավոր նշանակություն ունեցող որոշ խումբ գույքերի՝ այլ նպատակներով օգտագործման, տիրապետման դեպքերի նվազեցումը:

4. Նախագծի ընդունման կապակցությամբ այլ նորմատիվ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտությունը, ինչպես նաև լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտությունը և պետական բյուջեի եկամուտներում և ծախսերում սպասվելիք փոփոխությունները.

Նախագծի ընդունման կապակցությամբ այլ օրենքներում լրացումներ կատարելու անհրաժեշտություն չի առաջացել, ինչպես նաև պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում եկամուտների և ծախսերի էական ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

5. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ.

Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ բացակայում է:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. 1998 թվականի մայիսի 5-ի Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) լրացնել հետևյալ բովանդակությամբ 17.1 գլխով.

«ԳԼՈՒԽ 17.1

**ԱՌԱՆՁԻՆ ԽՈՒՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՓՈԽԱՆՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Հոդված 288.2. Առանձին խումբ անշարժ գույքի հասկացությունը

1. Սույն գլխով նախատեսված դրույթները տարածվում են այն անշարժ գույքի վրա, որի նկատմամբ գույքային իրավունքները պատկանել են ՀԽՍՀ հասարակական կազմակերպությանը և որի նկատմամբ գրանցվել է ՀՀ-ում ստեղծված ոչ առևտրային կազմակերպության սեփականության իրավունքը:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված գույքերի ցանկը սահմանում է Կառավարությունը:

Հոդված 288.3. Առանձին խումբ անշարժ գույքի օտարման պայմանները և կարգը

1. Առանձին խումբ անշարժ գույքի՝ օրենքով սահմանված որևէ եղանակով սեփականատիրոջ փոփոխության հանգեցնող գործարքը կարող է կնքվել միայն տվյալ իրավաբանական անձի կառավարման բարձրագույն մարմնի անդամների 2/3-ի համաձայնության առկայության դեպքում:

2. Առանձին խումբ անշարժ գույքի՝ ցանկացած եղանակով սեփականատիրոջ փոփոխության հանգեցնող գործարքի կնքումից առնվազն երեք ամիս առաջ սույն հոդվածի 1-ին մասով սահմանված՝ գործարքին համաձայնություն տալու մասին ակտի նախագիծը դրվում է հանրային քննարկման՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից վարվող իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում՝ պետական գույքի կառավարման ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարության միջոցով:

Հոդված 288.4. Առանձին խումբ անշարժ գույքի հատուցելի օտարման դեպքում պետության գնելու նախապատվության իրավունքը

1. Առանձին խումբ անշարժ գույքի՝ ցանկացած եղանակով հատուցելի օտարման դեպքում Հայաստանի Հանրապետությունն այն ձեռք բերելու նախապատվության իրավունք ունի:

2. Առանձին խումբ անշարժ գույքի սեփականատերը պարտավոր է սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը ցանկացած երրորդ անձի հատուցմամբ օտարելու մտադրության մասին գրավոր տեղեկացնել Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս պետական գույքի կառավարման ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարության: Գրավոր ծանուցման մեջ նշվում են գույքի օտարման առաջարկվող գինը և այլ պայմանները, իսկ ծանուցմանը կից ներկայացվում է «Գնահատման գործունեության մասին» օրենքով սահմանված առնվազն երեք գնահատման հաշվետվություն: Նախարարությունը ծանուցումը ստանալուց հետո՝ վեց ամսվա ընթացքում ընդունում կամ մերժում է ձեռքբերման առաջարկը՝ այդ մասին գրավոր ծանուցելով սեփականատիրոջը: Եթե պետությունը հրաժարվում է ձեռք բերել գույքը, ապա սեփականատերն իրավունք ունի գույքը հատուցմամբ օտարել այլ անձի՝ պայմանով, որ փաստացի օտարման գինը պակաս չէ պետությանն առաջարկված գնից, իսկ պայմանագրի այլ պայմանները համապատասխանում են պետությանն առաջարկված պայմաններին:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետի ավարտից հետո Հայաստանի Հանրապետությանն առաջարկված գնից ցածր կամ առավել բարենպաստ պայմաններով գույքն օտարելու մտադրության յուրաքանչյուր դեպքում սեփականատերը պարտավոր է այդ մասին սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով կրկին ծանուցել Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս պետական գույքի կառավարման ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարության:

4. Եթե Հայաստանի Հանրապետությունը սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված ծանուցումը ստանալուց հետո երեք ամսվա ընթացքում հրաժարվում է ձեռք բերել գույքը, ապա սեփականատերն իրավունք ունի գույքը հատուցմամբ օտարել այլ անձի՝ պայմանով, որ փաստացի օտարման գինը պակաս չէ պետությանն առաջարկված գնից, իսկ պայմանագրի այլ պայմանները համապատասխանում են պետությանն առաջարկված պայմաններին:

5. Գույքը նվազ գնով կամ առավել բարենպաստ պայմաններով փոխանցելու մասին երրորդ և յուրաքանչյուր հաջորդ ծանուցմանը Հայաստանի Հանրապետությունը պատասխանում է ծանուցումը ստանալու պահից մեկամսյա ժամկետում:

6. Սույն հոդվածով նախատեսված գնման առաջարկի քննարկման կարգը սահմանում է Կառավարությունը:

Հոդված 288.5. Առանձին խումբ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի անհատույց փոխանցման առանձնահատկությունները

1. Առանձին խումբ անշարժ գույքը սեփականության իրավունքով անհատույց կարող է փոխանցվել միայն ոչ առևտրային կազմակերպություններին, պետությանն ու համայնքներին՝ նվիրաբերության կարգով:

Հոդված 288.6. Առանձին խումբ անշարժ գույքի նկատմամբ այլ գույքային իրավունքների փոխանցման առանձնահատկությունները

1. Առանձին խումբ անշարժ գույքի նկատմամբ այլ գույքային իրավունքները հատուցմամբ կամ անհատույց փոխանցելու վերաբերյալ գործարքը կարող է կնքվել միայն տվյալ իրավաբանական անձի կառավարման բարձրագույն մարմնի անդամների 2/3-ի համաձայնության առկայության դեպքում:

2. Առանձին խումբ անշարժ գույքի նկատմամբ այլ գույքային իրավունքները հատուցմամբ կամ անհատույց փոխանցելու վերաբերյալ գործարքի կնքումից առնվազն երեք ամիս առաջ սույն հոդվածի 1-ին մասով սահմանված՝ գործարքին համաձայնություն տալու մասին ակտի նախագիծը դրվում է հանրային քննարկման՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից վարվող իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում՝ պետական գույքի կառավարման ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարության միջոցով:

Հոդված 288.7. Առանձին խումբ անշարժ գույքի գրավադրման առանձնահատկությունները

1. Առանձին խումբ անշարժ գույքի գրավի պայմանագրով գրավառու կարող է հանդես գալ միայն պետությունը կամ համայնքը:

2. Առանձին խումբ անշարժ գույքի գրավադրման գործարքը կարող է կնքվել միայն տվյալ իրավաբանական անձի կառավարման բարձրագույն մարմնի անդամների 2/3-ի համաձայնության առկայության դեպքում:

Հոդված 288.8. Առանձին խումբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների փոխանցման կանոնները չպահպանելու հետևանքները

1. Սույն գլխով սահմանված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների փոխանցման կանոնները չպահպանելը հանգեցնում է իրավունքների փոխանցման գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է:»:

Հոդված 2. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում սույն օրենքի 1-ին հոդվածով լրացվող՝ Օրենսգրքի 288.2-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված Կառավարության որոշումն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից:

2. Սույն օրենքի 1-ին հոդվածով լրացվող՝ Օրենսգրքի 288.2-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված որոշումը Կառավարությունն ընդունում է սույն օրենքի պաշտոնական հրապարակման օրվանից հետո՝ եռամսյա ժամկետում:

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ԱՅԼ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՂԱԴԱՐԵԼԸ

Հոդված 279. Սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների դադարման հիմքերը

1. Սեփականության իրավունքը դադարում է սեփականատիրոջ կողմից իր գույքն օտարելու, սեփականության իրավունքից հրաժարվելու, գույքը ոչնչացնելու և գույքի նկատմամբ սեփականության իրավունքի կորստի՝ օրենքով նախատեսված այլ դեպքերում:
2. Հի թույլատրվում սեփականատիրոջ գույքը հարկադրաբար վերցնել կամ առգրավել, բացի այն դեպքերից, երբ օրենքով նախատեսված հիմքերով՝
 - 1) պարտավորությունների համար գույքի վրա տարածվում է բռնագանձում (հոդված 281).
 - 2) օտարվում է այն գույքը, որն օրենքի ուժով չի կարող պատկանել տվյալ անձին (հոդված 282).
 - 3) սեփականությունն օտարվում է հանրության գերակա շահերի ապահովման նպատակով (հոդված 218).
 - 4) վերցվում են անտնտեսվար պահվող մշակութային արժեքները (հոդված 284).
 - 5) կատարվում է ռեկվիզիցիա (հոդված 285).
 - 6) կատարվում է բռնագրավում (հոդված 288).
 - 7) իրավաբանական անձը դատարանի վճռով վերակազմակերպվում կամ լուծարվում է (63 և 67 հոդվածներ).
 - 8) գույքն օտարվում է՝ սույն օրենսգրքի 197 հոդվածի 4-րդ կետով, 208 և 220 հոդվածներով նախատեսված դեպքերում.
 - 9) կատարվում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձում:
3. Պետության սեփականությանը պատկանող գույքն օտարվում է քաղաքացիներին և իրավաբանական անձանց՝ մասնավորեցման (ապապետականացման) մասին օրենքներով սահմանված կարգով:
4. Քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականությանը պատկանող գույքի պետականացումը (ազգայնացումը) կատարվում է օրենքի հիման վրա, այդ գույքի արժեքի ու մյուս վնասների հատուցմամբ՝ սույն օրենսգրքի 286 հոդվածով սահմանված կարգով:
5. Գույքային իրավունքները դադարում են սույն օրենսգրքի 217, 217.7 և 247 հոդվածներով, ինչպես նաև օրենքով կամ պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:
(279-րդ հոդվածը խմբ. 27.11.06 ՀՕ-187-Ն, փոփ. 01.03.17 ՀՕ-70-Ն, խմբ. 24.10.18 ՀՕ-408-Ն, լրաց. 16.04.20 ՀՕ-248-Ն)

Հոդված 280. Սեփականության իրավունքից հրաժարվելը

1. Քաղաքացին կամ իրավաբանական անձը կարող է հրաժարվել իրեն պատկանող գույքի սեփականության իրավունքից՝ այդ մասին գրավոր հայտարարելով կամ այնպիսի գործողություններ կատարելով, որոնք ակնհայտ վկայում են գույքի տիրապետումից, օգտագործումից և տնօրինումից նրա մեկուսացման մասին՝ առանց այդ գույքի նկատմամբ որևէ իրավունք պահպանելու մտադրության, իսկ սույն օրենսգրքի 275 հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում՝ գույքը հետ չպահանջելով: Սույն օրենսգրքի 275 հոդվածի 4-րդ մասով նախատեսված ապրանքների և (կամ) տրանսպորտային միջոցների սեփականատերը հայտնի չլինելու դեպքում դրանք ներմուծելու պահից մեկ տարի լրանալը հիմք է սեփականության իրավունքից հրաժարվելու փաստը ճանաչելու համար:
2. Սեփականության իրավունքից հրաժարվելը հիմք չէ գույքի նկատմամբ սեփականատիրոջ իրավունքները և պարտականությունները դադարելու համար, մինչև այլ անձի կողմից այդ գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելը:
(280-րդ հոդվածը լրաց. 16.09.09 ՀՕ-179-Ն)

Հոդված 281. Սեփականատիրոջ պարտավորություններով գույքի վրա բռնագանձում տարածելը

1. Սեփականատիրոջ պարտավորություններով նրան պատկանող գույքի վրա բռնագանձում տարածելու միջոցով գույքը կարող է առգրավվել դատարանի վճռի հիման վրա, եթե բռնագանձում տարածելու այլ կարգ նախատեսված չէ պայմանագրով:

2. Գույքի նկատմամբ, որի վրա բռնագանձում է տարածվել, սեփականատիրոջ իրավունքը դադարում է այդ գույքի նկատմամբ այն անձի սեփականության իրավունքի ծագման պահից, ում անցնում է տվյալ գույքը:

Հոդված 282. Անձի սեփականության իրավունքը դադարելն այն գույքի նկատմամբ, որը չի կարող նրան պատկանել

1. Եթե օրենքով թույլատրվող հիմքերով անձին որպես սեփականություն անցել է այնպիսի գույք, որը սեփականության իրավունքի ծագման պահին օրենքի ուժով չէր կարող նրան պատկանել, սեփականատերն այդ գույքը պետք է օտարի դրա նկատմամբ սեփականության իրավունքի ծագման պահից մեկ տարվա ընթացքում, եթե այլ ժամկետ նախատեսված չէ օրենքով:

1.1. Եթե օրենքով թույլատրվող հիմքերով անձին որպես սեփականություն անցած գույքը դրա նկատմամբ սեփականության իրավունքը ծագելուց հետո առաջացած փաստական հանգամանքի ի հայտ գալու հիմքով օրենքի ուժով չի կարող նրան պատկանել, ապա սեփականատերն այդ գույքը պետք է օտարի այդ հանգամանքի ի հայտ գալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, եթե այլ ժամկետ նախատեսված չէ օրենքով:

2. Այն դեպքերում, երբ սեփականատերը սույն հոդվածի 1-ին կամ 1.1-ին կետում նշված ժամկետում գույքը չի օտարում, ապա նման գույքը՝ դրա բնույթի և նշանակության հաշվառմամբ, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի դիմումի հիման վրա կայացված դատարանի վճռով վաճառվում է հարկադիր կարգով, և ստացված գումարը հանձնվում է նախկին սեփականատիրոջը կամ վերածվում է պետական կամ համայնքային սեփականության, իսկ նախկին սեփականատիրոջը հատուցվում է գույքի արժեքը: Այդ դեպքում հանվում են գույքն օտարելու ծախսերը:

3. Եթե օրենքով թույլատրվող հիմքերով քաղաքացու կամ իրավաբանական անձի մոտ հայտնվել է այնպիսի գույք, որը ձեռք բերելու համար անհրաժեշտ է հատուկ թույլտվություն, և որն ստանալու համար սեփականատիրոջ խնդրանքը մերժվել է, այդ գույքն օտարվում է այն գույքի համար սահմանված կարգով, որը չի կարող պատկանել տվյալ սեփականատիրոջը:

(282-րդ հոդվածը փոփ., լրաց., խմբ. 16.01.18 ՀՕ-74-Ն)

Հոդված 283. Հողամասը վերցնելու կապակցությամբ դրա վրա գտնվող անշարժ գույքն օտարելը

(հոդվածն ուժը կորցրել է 27.11.06 ՀՕ-187-Ն)

Հոդված 284. Անտնտեսվար պահվող մշակութային արժեքները վերցնելը

1. Այն դեպքերում, երբ օրենքի համաձայն՝ առանձնապես արժեքավոր և պետության կողմից պահպանվող մշակութային արժեքների սեփականատերը դրանք պահում է անտնտեսվար, ինչը սպառնում է դրանց նշանակության կորստին, նման արժեքները դատարանի վճռով կարող են վերցվել սեփականատիրոջից՝ պետության կողմից դրանց գինը հատուցելու միջոցով:

2. Մշակութային արժեքները վերցնելիս սեփականատիրոջը դրանց արժեքը հատուցվում է կողմերի համաձայնությամբ, իսկ վեճի դեպքում՝ դատարանի սահմանած չափով:

Հոդված 285. Ռեկվիզիցիա

1. Տարերային աղետների, տեխնոլոգիական վթարների, համաճարակների դեպքերում և արտակարգ բնույթ կրող այլ հանգամանքներում գույքը կարող է օրենքով սահմանված պայմաններում ու կարգով, պետական մարմինների որոշմամբ, վերցվել սեփականատիրոջից՝ ի շահ հասարակության՝ դրա արժեքը վճարելու պայմանով (ռեկվիզիցիա):

2. Սեփականատերը կարող է դատարանում վիճարկել հարկադրաբար վերցված գույքի հատուցման արժեքի չափը:

3. Անձը, ում գույքը հարկադրաբար վերցվել է, իրավունք ունի պահանջել, որ իրեն վերադարձվի պահպանված գույքը, եթե վերացել են այն հանգամանքները, որոնց կապակցությամբ կատարվել է ռեկվիզիցիա:

Հոդված 286. Օրենքի ուժով սեփականության իրավունքը դադարելու հետևանքները

Հայաստանի Հանրապետության կողմից սեփականության իրավունքը դադարեցնող օրենքն ընդունելու դեպքում դրա հետևանքով սեփականատիրոջը պատճառված վնասները, այդ թվում՝ գույքի արժեքը, հատուցում է պետությունը: Վնասների հատուցման մասին վեճերը լուծում է դատարանը:

Հոդված 287. Գույքի գնահատումը սեփականության իրավունքը դադարելիս

Սեփականության իրավունքը դադարելիս գույքը գնահատվում է դրա շուկայական արժեքով:

Հոդված 288. Բռնագրավումը
(վերնագիրը խմբ. 09.06.22 ՀՕ-180-Ն)

1. Օրենքով նախատեսված դեպքերում գույքը սեփականատիրոջից կարող է անհատույց վերցվել դատավճռով՝ որպես հանցագործության արդյունքում ուղղակի կամ անուղղակի առաջացած կամ ստացված գույք, այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտ և այլ տեսակի օգուտ, հանցագործության համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիք և միջոց, հանցագործության առարկա: Օրենքով նախատեսված դեպքերում գույքը սեփականատիրոջից կարող է անհատույց վերցվել նաև դատարանի վճռի հիման վրա:

(288-րդ հոդվածը խմբ. 09.06.22 ՀՕ-180-Ն, լրաց. 22.03.23 ՀՕ-119-Ն)

Հոդված 288.1. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձումը

1. Ապօրինի ծագում ունեցող գույքը բռնագանձվում է դատարանի վճռով՝ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված կարգով:

(288.1-ին հոդվածը լրաց. 16.04.20 ՀՕ-248-Ն)

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ

**ԳՈՐԾԱՐՔՆԵՐ: ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՈՒԹՅՈՒՆ: ԺԱՄԿԵՏՆԵՐ: ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ: ՀԱՅՈՒՆՆԵՐ
ՎԱՂԵՍՈՒԹՅՈՒՆ**

(վերնագիրը լրաց. 17.06.16 ՀՕ-110-Ն)

«ԳԼՈՒԽ 17.1

ԱՌԱՆՁԻՆ ԽՈՒՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 288.2. Առանձին խումբ անշարժ գույքի հասկացությունը

1. Սույն գլխով նախատեսված դրույթները տարածվում են այն անշարժ գույքի վրա, որի նկատմամբ գույքային իրավունքները պատկանել են ՀԽՍՀ հասարակական կազմակերպությանը և որի նկատմամբ գրանցվել է ՀՀ-ում ստեղծված ոչ առևտրային կազմակերպության սեփականության իրավունքը:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված գույքերի ցանկը սահմանում է Կառավարությունը:

Հոդված 288.3. Առանձին խումբ անշարժ գույքի օտարման պայմանները և կարգը

1. Առանձին խումբ անշարժ գույքի՝ օրենքով սահմանված որևէ եղանակով սեփականատիրոջ փոփոխության հանգեցնող գործարքը կարող է կնքվել միայն տվյալ իրավաբանական անձի կառավարման բարձրագույն մարմնի անդամների 2/3-ի համաձայնության առկայության դեպքում:

2. Առանձին խումբ անշարժ գույքի՝ ցանկացած եղանակով սեփականատիրոջ փոփոխության հանգեցնող գործարքի կնքումից առնվազն երեք ամիս առաջ սույն հոդվածի 1-ին մասով սահմանված գործարքին համաձայնություն տալու մասին ակտի նախագիծը դրվում է հանրային քննարկման՝ Հայաստանի Հանրապետության

արդարադատության նախարարության կողմից վարվող իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում՝ պետական գույքի կառավարման ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարության միջոցով:

Հոդված 288.4. Առանձին խումբ անշարժ գույքի հատուցելի օտարման դեպքում պետության գնելու նախապատվության իրավունքը

1. Առանձին խումբ անշարժ գույքի՝ ցանկացած եղանակով հատուցելի օտարման դեպքում Հայաստանի Հանրապետությունն այն ձեռք բերելու նախապատվության իրավունք ունի:

2. Առանձին խումբ անշարժ գույքի սեփականատերը պարտավոր է սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը ցանկացած երրորդ անձի հատուցմամբ օտարելու մտադրության մասին գրավոր տեղեկացնել Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս պետական գույքի կառավարման ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարության: Գրավոր ծանուցման մեջ նշվում են գույքի օտարման առաջարկվող գինը և այլ պայմանները, իսկ ծանուցմանը կից ներկայացվում է «Գնահատման գործունեության մասին» օրենքով սահմանված առնվազն երեք գնահատման հաշվետվություն: Նախարարությունը ծանուցումը ստանալուց հետո՝ վեց վեցամսյա ընթացքում ընդունում կամ մերժում է ձեռքբերման առաջարկը՝ այդ մասին գրավոր ծանուցելով սեփականատիրոջը: Եթե պետությունը հրաժարվում է ձեռք բերել գույքը, ապա սեփականատերն իրավունք ունի գույքը հատուցմամբ օտարել այլ անձի՝ պայմանով, որ փաստացի օտարման գինը պակաս չէ պետությանն առաջարկված գնից, իսկ պայմանագրի այլ պայմանները համապատասխանում են պետությանն առաջարկված պայմաններին:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետի ավարտից հետո Հայաստանի Հանրապետությանն առաջարկված գնից ցածր կամ առավել բարենպաստ պայմաններով գույքն օտարելու մտադրության յուրաքանչյուր դեպքում սեփականատերը պարտավոր է այդ մասին սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով կրկին ծանուցել Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս պետական գույքի կառավարման ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարության:

4. Եթե Հայաստանի Հանրապետությունը սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված ծանուցումը ստանալուց հետո երեք ամսյա ընթացքում հրաժարվում է ձեռք բերել գույքը, ապա սեփականատերն իրավունք ունի գույքը հատուցմամբ օտարել այլ անձի՝ պայմանով, որ փաստացի օտարման գինը պակաս չէ պետությանն առաջարկված գնից, իսկ պայմանագրի այլ պայմանները համապատասխանում են պետությանն առաջարկված պայմաններին:

5. Գույքը նվազ գնով կամ առավել բարենպաստ պայմաններով փոխանցելու մասին երրորդ և յուրաքանչյուր հաջորդ ծանուցմանը Հայաստանի Հանրապետությունը պատասխանում է ծանուցումը ստանալու պահից մեկամսյա ժամկետում:

6. Սույն հոդվածով նախատեսված գնման առաջարկի քննարկման կարգը սահմանում է Կառավարությունը:

Հոդված 288.5. Առանձին խումբ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի անհատույց փոխանցման առանձնահատկությունները

1. Առանձին խումբ անշարժ գույքը սեփականության իրավունքով անհատույց կարող է փոխանցվել միայն ոչ առևտրային կազմակերպություններին, պետությանն ու համայնքներին՝ նվիրաբերության կարգով:

Հոդված 288.6. Առանձին խումբ անշարժ գույքի նկատմամբ այլ գույքային իրավունքների փոխանցման առանձնահատկությունները

1. Առանձին խումբ անշարժ գույքի նկատմամբ այլ գույքային իրավունքները հատուցմամբ կամ անհատույց փոխանցելու վերաբերյալ գործարքը կարող է կնքվել միայն տվյալ իրավաբանական անձի կառավարման բարձրագույն մարմնի անդամների 2/3-ի համաձայնության առկայության դեպքում:

2. Առանձին խումբ անշարժ գույքի նկատմամբ այլ գույքային իրավունքները հատուցմամբ կամ անհատույց փոխանցելու վերաբերյալ գործարքի կնքումից առնվազն երեք ամիս առաջ սույն հոդվածի 1-ին մասով սահմանված՝ գործարքին համաձայնություն տալու մասին ակտի նախագիծը դրվում է հանրային քննարկման՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից վարվող իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում՝ պետական գույքի կառավարման ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարության միջոցով:

Հոդված 288.7. Առանձին խումբ անշարժ գույքի գրավադրման առանձնահատկությունները

1. Առանձին խումբ անշարժ գույքի գրավի պայմանագրով գրավառու կարող է հանդես գալ միայն պետությունը կամ համայնքը:

2. Առանձին խումբ անշարժ գույքի գրավադրման գործարքը կարող է կնքվել միայն տվյալ իրավաբանական անձի կառավարման բարձրագույն մարմնի անդամների 2/3-ի համաձայնության առկայության դեպքում:

Հոդված 288.8. Առանձին խումբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների փոխանցման կանոնները չպահպանելու հետևանքները

1. Սույն գլխով սահմանված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների փոխանցման կանոնները չպահպանելը հանգեցնում է իրավունքների փոխանցման գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է:»:

Հոդված 1. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում սույն օրենքի 1-ին հոդվածով լրացվող՝ Օրենսգրքի 288.2-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված Կառավարության որոշումն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից:

2. Սույն օրենքի 1-ին հոդվածով լրացվող՝ Օրենսգրքի 288.2-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված որոշումը Կառավարությունն՝ ընդունում է սույն օրենքի պաշտոնական հրապարակման օրվանից հետո՝ եռամսյա ժամկետում: